ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԵՎ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

ՀՏԴ 794.1
DOI 10.56246/18294480-2022.12-36

ԽԱՉԻԿՅԱՆ ՀԱՅԿ
ԳՊՀ դասախոս,
Շախմատի ակադեմիայի մարզիչ,
Երևանի Պուշկինի անվան դպրոցի շախմատի ուսուցիչ
e-mail: Hayk.khachikyan85@gmail.com

Հայտնի է, որ պրոֆեսիոնալ սպորտում կարիերան ավարտելուց հետո շատ մարզիկներ բախվում են հետագա աշխատանքային գործունեություն վարելու խնդրին, քանի որ ոչ բոլորն են կարողանում կամ ցանկանում մարզիչ աշխատել: Շախմատային աշխարհում ևս այս խնդիրն առկա է: Սակայն այս մարզաձևի առանձնահատկությունների և շախմատիստների մեջ ձևավորված հատկությունների շնորհիվ հաճախ խնդիր չի առաջանում կարիերան ավարտելուց հետո այլ բնագավառում դրսևորվելու դեպքում, ավելին՝ նրանք գրանցում են մեծ հաջողություններ:

Ուսումնասիրելով շախմատային պատմությունը սկսած 18-րդ դարից, երբ ի հայտ եկան առաջին լուրջ աշխատություններն ու քիչ թե շատ պրոֆեսիոնալ խաղացողները, բացահայտում ենք մի կարևոր հանգամանք, ըստ որի մեծամասնություն են կազմել այն շախմատիստները, ովքեր ոչ միայն կարիերան ավարտելուց հետո, այլ նաև հենց կարիերայի ընթացքում բավական հաջող կերպով զբաղվել են այլ գործերով: Հիրավի, խորհրդանշական է այն փաստը, որ առաջին անթագակիր չեմպիոն համարվող Ֆրանսուա Ֆիլիդորը, որի շախմատային ժառանգությունը արդիական է ավելի քան 300 տարի, հանդիսանում է նաև ֆրանսիական երգիծական օպերայի հիմնադիրը և իր ժամանակի լավագույն երաժիշտներից մեկը:

Անշուշտ, որակները, որոնք շախմատիստը ձեռք է բերում պրոֆեսիոնալ բարդ կարիերայի ընթացքում, կոփում և կատարելագործում են ոչ միայն միտքը, այլ նաև բնավորությունը, որը ճիշտ ուղղորդելու դեպ-

քում չի կարող չփալ իր արդյունքները: Հենց այդ մասին էլ խոսվում է հոդվածում:

Բանալի բառեր՝ *շախմատ, կարիերա, շախմատիստ, սպորտ, գրոսմայստեր, մրցաշար, շախմատի պատմություն, Ռոբերտ Ֆիշեր, ֆինանսներ, Բոտվիննիկ, Մաքս Էյվե, Տիգրան Պետրոսյան, Մագնուս Կարլսեն, շախմատի մրցաշար, Կապաբլանկա, քաղաքական գործիչ, Կուբա, Օլիմպիական կոմիտեի նախագահ, խելացի, կամային գերկենտրոնացում, ուժեղագույն շախմատիստներ, շախմատի չեմպիոն, կենտրոնանալու կարողություն, պրոֆեսիոնալ շախմատիստ, փիլիսոփայություն, հոգեվերլուծություն, շախմատային մտածողություն, մարզիչ, դոկտորական ատենախոսություն:*

19-րդ դարի կեսերից, երբ արդեն անց էին կացվում առաջին շախմատային միջազգային մրցաշարերը, և եվրոպական առաջատար երկրները մրցում էին իրենց ուժեղագույն շախմատիստներով, շախմատը դադարեց լինել զուտ պալատականների և ազնվականների խաղ: Այն աստիճանաբար դարձավ մի ոլորտ, որտեղ հաջողության հասնելու համար պետք էր ներդնել հսկայական ժամանակ և ջանքեր: Իրավիճակը, իհարկե, համեմատելի չէր մեր օրերի հետ. հիմա շախմատիստները լուրջ ձեռքբերումներ ունենալու համար համակարգիչների առջև կամ մարզական հավաքներում ծախսում են իրենց գրեթե ողջ ժամանակը: Բայց անցյալի շախմատիստներն էլ իրական էնտուզիաստներ ու ռոմանտիկներ էին, որոնք նվիրվում էին շախմատին՝ իրենց աշխատանքի դիմաց հաճախ չստանալով ոչինչ:

Թե՛ այն ժամանակ, թե՛ հիմա, երբ պրոֆեսիոնալ շախմատիստները բարձրակարգ մրցաշարերում հաղթանակների համար ստանում են հսկայական գումարներ, այնուամենայնիվ եղել է և կա խնդիր, թե ինչով են զբաղվելու շախմատիստներն իրենց մարզական կարիերան ավարտելուց հետո: Ճիշտ է՝ հաճախ լսում ենք կարծիքներ, թե շախմատ կարելի է խաղալ ցանկացած տարիքում, բայց հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ կարիերան վաղ ավարտելու տարբեր պատճառներ կարող են լինել: Շախմատիստը կարող է կորցնել խանդավառությունը, կամ տարիքի հետ թուլանա գերկենտրոնացումը, և նա ի վիճակի չլինի պայքարել բարձր մակարդակում: Շախմատային կարիերան լքելու պատճառ կարող է լինել նաև հենց ֆինան-

սական խնդիրը, որն առկա է նաև մեր օրերում, եթե շախմատիստը չի գտնվում աշխարհի 20-30 լավագույն շախմատիստների ցանկում:

Շախմատի պատմությունը ցույց է տալիս, որ թե՛ նախկինում, թե՛ հիմա բազմաթիվ են այն դեպքերը, երբ պրոֆեսիոնալ շախմատիստները կարիերան ավարտելուց հետո հաջողությամբ ներգրավվել են տարբեր այլ բնագավառներում և գրանցել մեծ հաջողություններ: Ու եթե շախմատն այսօր ավելի ու ավելի է ընկալվում հիմնականում որպես մարզաձև, ապա համեմատած մյուս մարզաձևերով զբաղվողների՝ շախմատիստների հաջող ներգրավվածությունն այլ ոլորտներում անհամեմատ ավելի մեծ է: Անշուշտ, պետք է խոստովանել նաև, որ շախմատից հեռու շրջանակներում այն կարծիքն է տարածված, թե շախմատիստները միակողմանի զարգացած և փակ մարդիկ են, որոնց համար շախմատի 64 վանդակներից այն կողմ աշխարհ պարզապես գոյություն չունի: Բոլորովին նպատակ չունենալով ժխտել, որ նման շախմատիստներ եղել են ու կան, այնուամենայնիվ պետք է փաստել, որ այդ կարծիքը բավական ուռճացված է և ձևավորված է հիմնականում մի քանի հանճարեղ և սերունդների վրա մեծ տպավորություն թողած շախմատիստների՝ Պոլ Մորֆիի, Ռոբերտ Ֆիշերի կերպարների շուրջ: Այդ կարծիքի հաստատմանը նպաստել են նաև աշխարհահռչակ գրողների գեղարվեստական ստեղծագործությունները, ինչպես՝ Վլադիմիր Նաբոկովի «Լուժինի պաշտպանությունը» և Ստեֆան Ցվեյգի «Շախմատային նովել» -ը և նրանց մասին մեծ հնչեղություն ստացած ֆիլմերը: Ինչպես գիտեք, հատկապես ժամանակակից աշխարհում կարծիքներն հիմնականում ձևավորվում են տեղեկատվական հոսքերի տպավորության ներքո: Բայց ի հակակշիռ վերոնշյալ փաստերի՝ փորձենք ներկայացնել նաև հակառակ իրավիճակներ: Իսկ մինչ այդ պետք է պարզել, թե ի՛նչ հատկություններ է սերմանում շախմատը մարդու մեջ, որոնք կարելի է մեծ արդյունավետությամբ օգտագործել տարբեր բնագավառներում:

Առաջին հերթին, իհարկե, շախմատիստին հատուկ է երկար ժամանակով կենտրոնանալու կարողությունը: Հատկապես ժամանակակից աշխարհում, երբ մարդն անցկացնում է բավական երկար ժամանակ սոցցանցերում և սովոր է արագ ու կարճ ինֆորմացիայի հոսքին, խաթարվում է կենտրոնանալու կարողությունը: Եվ այդ է պատճառը, որ մեր օրերում բարձր է գնահատվում տևական ժամանակ կենտրոնանալու շախմատային այդ ունակությունը, որը թույլ է տալիս կատարել երկարատև կենտրոնացում ու

համբերություն պահանջող աշխատանք՝ հնարավորությունների առավելագույն ներուժով:

Երկրորդ. շախմատիստի համար սովորական առօրյա դարձած հատկություն է անընդհատ կատարելագործվելը: Սա թվում է, թե պարզ է և հատուկ է նաև այլ ոլորտներին, սակայն շախմատիստի համար դա ամենօրյա գործողություն է: Նա շարունակ մտածում է, աշխատում է սեփական սխալների ու թերությունների շտկման ուղղությամբ, փորձում գտնել լավագույն քայլը:

Երրորդ. շախմատիստին բնորոշ կարևորագույն հատկություններից է նաև խնդրի լուծումը կոնկրետ, հաճախ շատ կարճ ժամանակահատվածում: Կյանքում առհասարակ և մասնավորապես աշխատանքում հաճախ մարդը ստիպված է լինում ելքեր գտնել սահմանափակ ժամկետում, և այդ առումով կարելի է փաստել, որ շախմատիստը սթրեսային իրավիճակում լավագույնս է տիրապետում կարճ ժամանակում որոշումներ կայացնելու կարողությանը, ինչին նա վարժվել է երկար տարիներ:

Անցնելով կոնկրետ օրինակների՝ ներկայացնենք հենց աշխարհի չեմպիոնների, որոնք, համատեղելով պրոֆեսիոնալ շախմատիստի ծանր աշխատանքը, մեծ հաջողություններ են ունեցել նաև այլ ոլորտներում: Կարելի է վստահաբար ասել, որ այս առումով բացահայտ առաջատարն աշխարհի երկրորդ չեմպիոն Էմանուել Լասկերն է: Նա բացառիկ արդյունքներ է գրանցել ոչ միայն շախմատում՝ քսանյոթ տարի անընդմեջ իր ձեռքում պահելով չեմպիոնական տիտղոսը, այլև դոկտորական ատենախոսություն է պաշտպանել մաթեմատիկական և փիլիսոփայական գիտություններից: Առավել հայտնի են նրա փիլիսոփայական աշխատությունները, որոնք տպագրվել են 20-րդ դարի սկզբին: Դրանք են՝ «Պայքար», «Խաղաղության հաստատում» և «Անավարտի փիլիսոփայություն» գրքերը, որոնցում Լասկերն անդրադառնում է մարդկությանը հուզող գրեթե բոլոր խնդիրներին: Էմանուել Լասկերը, անշուշտ, 20-րդ դարասկզբի մտքի հսկաներից է, ով իր կարողություններով կարողացել է զարմացնել անգամ Ալբերտ Էյնշտեյնին: Վերջինս սերտ շփում ուներ Լասկերի հետ և մի առիթով գրել է. «Լասկերի հետ կայացած բազմաթիվ շփումներում ես հաճախ հայտնվում էի լսողի դերում, քանի որ նրա ստեղծագործ մտքին ավելի հատուկ էր ներկայացնել իր տեսակետը, քան ընդունել ուրիշներինը: Պետք է փաստել, որ շատ հաճախ նա ճիշտ էր»:

Ավելորդ չէ նշել նաև, որ Լասկերը արտակարգ արդյունքներ էր գրանցել նաև այլ խաղերում. նա գրեթե հավասարը չուներ շաշկի և բրիջ խաղերում, անգամ գրքեր է գրել այդ խաղերի մասին:

Շախմատի արքաներից մտքի մյուս հսկան լեգենդար Միխայիլ Բոտվիննիկն է: Նա կարողանում էր գիտական աշխատանքը զուգակցել աշխարհի շախմատի առաջնություններում մասնակցության հետ, ինչն աներևակայելի երևույթ էր: Լինելով տեխնիկական գիտությունների դոկտոր՝ Բոտվիննիկը նաև առաջինն էր, որը ստեղծեց շախմատ խաղացող համակարգիչ: «Պիոներ» անունով կնքված համակարգիչը իսկական հեղափոխություն առաջացրեց այն ժամանակվա շախմատային մտքի մեջ: Բազմակողմանի զարգացած և բացառիկ կամքի տեր Բոտվիննիկը մինչև իր կյանքի վերջին օրերը աշխատում էր մի ծրագրի վրա, որը պետք է կառավարեր համաշխարհային տնտեսությունը, այն բացառելու էր կոռուպցիան և շահագործումը, վերջ դներ սովին: Բոտվիննիկը հասցրեց ավարտել այդ ծրագիրը, բայց կապիտալիստական աշխարհին այդ ծրագիրը չհետաքրքրեց: Գուցե ապագայում…

Լասկերի ու Բոտվիննիկի պես մտքի հսկաների կողքին չենք կարող չհիշատակել մի քանի այլ չեմպիոնների, որոնք, լինելով շախմատային Օլիմպոսի գագաթին, զուգահեռ ծավալել են այլ մասնագիտական գործունեություն, ունեցել շոշափելի հաջողություններ:

Այսպես՝ շախմատի աշխարհի 5-րդ չեմպիոն Մաքս Էյվեն մանկուց տաղանդ է դրսևորել ոչ միայն շախմատում, այլև մաթեմատիկայում: Քսանհինգ տարեկանում նա կարողացել է պաշտպանել դոկտորական ատենախոսություն, երեսուն և ավելի տարիներ դասավանդել է Ամստերդամի լավագույն համալսարաններից մեկում:

Իրավագիտության դոկտորի աստիճան է ունեցել աշխարհի 4-րդ չեմպիոն, հանճարեղ Ալեքսանդր Ալյոխինը:

Տիգրան Պետրոսյանը՝ աշխարհի 9-րդ չեմպիոնը, եղել է փիլիսոփայական գիտությունների թեկնածու:

Բազմակողմանի զարգացած մարդ է եղել մյուս հայազգի հանճարեղ շախմատիստ, 13 –րդ չեմպիոն Գարրի Կասպարովը: Շախմատային կարիերան ավարտելուց հետո նա դարձավ մեկ տասնյակից ավելի փայլուն գրքերի (ոչ միայն շախմատային) հեղինակ: Դրանք թարգմանվել են ավելի քան քսան լեզուներով և վերահրատարակվել արդեն մի քանի անգամ: Կասպա-

րովը նաև առաջինն էր, որը շախմատը վերածեց բիզնեսի՝ հիմնելով կայքեր, ստեղծելով իր անվամբ համակարգիչներ և այլն:

Ներկայումս բիզնեսով բավական հաջող զբաղվում է մեր օրերի ուժեղագույն շախմատիստ Մագնուս Կարլսենը: Նա «Play Magnus» հայտնի ուսուցողական ծրագրի գլխավոր բաժնետերն է և www.chess24.com հանրահայտ կայքի սեփականատերը:

20-րդ դարի 40-ական թվականների վերջերից շախմատային արվեստը մեծ զարգացում ապրեց, և պրոֆեսիոնալ շախմատում մրցակցությանը դիմանալն ավելի դժվարացավ: Շախմատն ավելի շատ ժամանակ ու ջանք սկսեց պահանջել: Ու շատ ուժեղագույն շախմատիստներ կանգնեցին փաստի առջև, քանի որ բացի ԽՍՀՄ-ից գրեթե ոչ մի այլ երկրում շախմատիստներին իրենց աշխատանքի համար չէին վարձատվում: Հատկապես ծանր էր իրավիճակը ԱՄՆ-ում, քանի որ հենց այնտեղ որոշ տաղանդավոր շախմատիստներ, որոնք հավակնում էին շախմատային գահին, հրաժարվեցին շախմատիստի կարիերայից, բայց մեծ բարձունքների հասան այլ բնագավառներում:

Այսպես նույն 1940-ականների աշխարհի չեմպիոնի հավակնորդ Ռոյբեն Ֆայնը, հրաժարվեց հավակնորդների մրցաշարից ու նվիրվեց հոգեվերլուծության ու դասախոսական գործունեությանը: Նա աշխատում էր Նյու Յորքի համալսարաններից մեկում, Ամստերդամի ու Ֆլորենտինյան համալսարանների պատվավոր պրոֆեսոր էր: Նյու Յորքում Ֆայնը հիմնադրեց նաև հոգեբանական արվեստի կենտրոն ու պաշտպանեց դոկտորական ատենախոսություն:

Շախմատային կարիերային զուգահեռ բավական հաջողակ հաշվապահ է եղել նաև շախմատի պատմության ամենահայտնի «վունդերքինդներից» մեկը՝ Սամուել Ռեշևսկին: Նա այդ երկու ոլորտների համադրումը շարունակեց մինչև կյանքի վերջը:

Այս նույն ժամանակների շախմատիստներից է Միգել Նայդորֆը՝ արգենտինացի մեծատաղանդ շախմատիստը: Նայդորֆը նախ աշխարհին զարմացրեց առանց խաղատախտակին նայելու խաղալու իր արտակարգ կարողությամբ. ի դեպ խաղում էր 48 հոգու հետ միաժամանակ: Ապա հրաժարվեց պայքարել աշխարհի չեմպիոնի կոչման համար և սկսեց զբաղվել բիզնեսով: Կարճ ժամանակ անց Նայդորֆն արդեն անշարժ գույքի գործակալությունների մեծ ցանցի մեծահարուստ սեփականատեր էր:

Ժամանակակից աշխարհում նման հիանալի օրինակ է Ֆրանսիայի հայտնի գրոսմայստեր Ժոել Լոթիեն: Նա իր շախմատային կարիերայի գագաթնակետում եղել է լավագույնների տասնյակում: Սակայն ակտիվ մասնակցությունը մրցաշարերին ավարտելուց հետո հիմնել է իր բիզնեսը ու գրանցել մեծ հաջողություններ:

Ընդունված է համարել, որ շախմատիստներն հիմնականում ֆինանսների, քաղաքականության, նաև խաղերի (պոկեր, բրիջ և այլն) ոլորտներում են լավ դրսևորվում:

Քաղաքականության մեջ առաջին լուրջ փորձը կատարել է Կապաբլանկան: Նրա բարձր հեղինակությունը հաշվի առնելով՝ Կուբայի կառավարությունը հաճախ հենց նրան էր ուղարկում բարդ բանակցությունների հատուկ հանձնարարությամբ:

Քաղաքական գործչի փայլուն կարիերա է ստեղծել 12-րդ չեմպիոն Անատոլի Կարպովը: Նա ԽՍՀՄ փլուզումից առ այսօր ՌԴ Պետական դումայի պատգամավոր է:

Իրենց կարիերան քաղաքական ոլորտ են տեղափոխել նաև լիտվացի գրոսմայստեր Վիկտորյա Չմիլիտեն. պատգամավոր է 2020 թվականից, գրոսմայստեր, միջազգային վարպետ Ալիսա Մարիչը. նա եղել է Սերբիայի սպորտի և երիտասարդության հարցերով նախարար, լեգենդար Նոնա Գափրինդաշվիլին՝ Վրաստանի օլիմիական կոմիտեի նախագահը 1990-ականներին:

Նշանավոր շախմատիստներից պոկերի մեծ վարպետներ են դարձել հայտնի գրոսմայստերներ Ռոլթեր Բրաունը, Ալեքսանդր Գրիշչուկը և այլք:

Հայտնի է, որ աշխատանքի ընդունելիս ֆինանսների և ծրագրավորման ոլորտներում նախապատվությունը տրվում է շախմատիստներին կամ շախմատով զբաղված մարդկանց: Օրինակ՝ աշխարհի ամենահարուստ մարդկանցից մեկը՝ Ուորեն Բաֆֆետը, իր աշխատակիցների համար պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ հայտնի գրոսմայստերների հետ և շախմատով զբաղվող մարդկանց տալիս մեծ առավելություններ աշխատանքի ընդունելիս:

Բերված օրինակները և շախմատային մտածելակերպ ունեցող անձանց առավելությունները ներկայացնելը համոզիչ կերպով ապացուցում են, որ շախմատիստները ցանկության դեպքում կարող են օգտագործել իրենց մտքի հմտություններն ու կատարելագործվել այլ բնագավառներում: Մյուս կողմից չպետք է հիմնվել միայն բացառիկ ընդունակություններ ունեցող

մարդկանց օրինակների վրա ու փորձել համատեղել: Շատ դեպքերում այլ բնագավառում հաստատվելու և լուրջ հաջողություններ ունենալու համար պետք է մոռանալ շախմատը: Շատ բարդ, հաճախ անհնար է շախմատային անդունդում կլանված ուղեղով փորձել կայանալ մեկ այլ բնագավառում: Հաճախ հենց սա է հիմնական խոչընդոտը: Շախմատը մի յուրահատուկ աշխարհ է, որտեղ մեկ անգամ հայտնվելով՝ հաճախ մինչև կյանքի վերջ դժվար է լինում դուրս գալ. հինավուրց և առեղծվածային ֆիգուրներն անբացատրելի կերպով կլանում են և ստիպում մտածել միայն ու միայն, էլի ու էլի իրենց մասին: Խելացի և կամային մարդը, իհարկե, կարող է չկորչել այս խորության մեջ և հիշել դասական դարձած հայ մեծանուն Տիգրան Պետրոսյանի խոսքերը. «Ձեզանից շախմատիստներ կդառնան ոչ բոլորը, սակայն ոչ ոք չի ափսոսա այն ժամանակը, որ տրամադրել է շախմատին, քանի որ այն կօգնի ձեզ ցանկացած մասնագիտության մեջ»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ցվեյգ Ստ., Շախմատային նովել, Երևան, 1967, 120 էջ:
2. Каспаров Г. К., «Мои великие предшественники», Том 4, М., 2005, 593 էջ:
3. Каспаров Г. К., «Шахматы как модель жизни», М., 2008, 350 էջ:
4. Ласкер Эмануил «Борьба», М., 2007, 132 էջ:
5. Линдер В. И., Линдер И. М., «Короли шахматного мира», М., 2001, 974 էջ:
6. Набоков Владимир, «Защита Лужина», М., 2021, 288 էջ:
7. https://youtube.com/watch?v=9iM0L2JbJoQ&feature=share
8. https://www.youtube.com/watch?v=wMMJ7Sw7TYM
9. https://www.youtube.com/watch?v=9iM0L2JbJoQ

PROBLEMS OF CHESS PLAYERS ACTIVITIES AFTER THE CAREER END AND EFFECTIVENESS OF CHESS THINKING IN OTHER FIELDS

KHACHIKYAN HAYK

GSU Lecturer, Coach at the Chess Academy,

Chess Teacher at the Basic School after Alexander Pushkin, Yerevan

e-mail: Hayk.khachikyan85@gmail.com

It is known that, many coaches face the problem of pursuing further professional activities, after the end of their career in professional sport as not

everyone is able or willing to work as a coach. This problem exists in the world of chess. However, due to the peculiarities of this sport and the chess players' qualities, it is often not a problem to emerge in another field after the end of their career, moreover they have great success.

Examining the history of chess from the 18th century, when the first serious works and more or less professional players appeared, we discover one important fact, according to which the majority were chess players who were quite successful in other things not only after finishing their career, but also during it. It is truly symbolic that François Philidor, considered the first undefeated champion, whose chess legacy is more than 300 years old, is also the founder of the French satirical opera, and one of the best musicians of his time.

Certainly, the qualities that a chess player acquires during a difficult professional career, improve not only the mind, but also the character, which, being guided correctly, can not but give their results. The article is about this.

Keywords: *chess, career, chess player, sport, grandmaster, tournament, Robert Fischer, finance, Botvinnik, Max Evan, Tigran Petrosyan, Magnus Carlsen, chess tournament, Capablanca, politician, Cuba, president of the Olympic Committee, voluntary overconcentration, strongest chess players, chess champion, ability to concentrate, professional chess player, philosophy, psychoanalysis, chess thinking, coach.*

ПРОБЛЕМЫ ДЕЯТЕЛЬНОСТИ ШАХМАТИСТОВ ПОСЛЕ ЗАВЕРШЕНИЯ КАРЬЕРЫ И ЭФФЕКТИВНОСТЬ ШАХМАТНОГО МЫШЛЕНИЯ В ДРУГИХ СФЕРАХ

ХАЧИКЯН АЙК
Преподаватель ГГУ,
Тренер Шахматной академии,
Преподаватель шахмат в школе им. А. С. Пушкина в г. Ереван
электронная почта: Hayk.khachikyan85@gmail.com

Общеизвестно, что после завершения карьеры в профессиональном спорте многие спортсмены сталкиваются с проблемой продолжения трудовой деятельности, так как не все могут или хотят работать тренером. Эта проблема тоже наличествует в шахматном мире. Однако, благодаря особенностям этого вида спорта, качествам, заложенным в шахматистах, после завершения

карьеры, зачастую, не составляет труда проявить себя в другой трудовой сфере, более того, они там проявляют большую результативность.

Рассматривая историю шахмат с XVIII века, когда появились первые серьезные труды и более или менее профессиональные игроки, мы обнаруживаем существенное обстоятельство, согласно которому большинство шахматистов, не только по окончании карьеры, но и во время шахматной карьеры успешным образом занимались другими делами. Поистине символичен тот факт, что Франсуа Филидор, считающийся первым некоронованным чемпионом, чьё шахматное наследие актуально более 300 лет, является основоположником французской сатирической оперы, и одним из лучших музыкантов своего времени.

Безусловно, качества, которые шахматист приобретает в ходе непростой профессиональной карьеры, закаляют и совершенствуют не только ум, но и характер, который при правильной направленности не может не дать определённых результатов. Именно об этом и говорится в статье.

Ключевые слова: *шахматы, карьера, шахматист, спорт, гроссмейстер, турнир, Роберт Фишер, финансы, Ботвинник, Макс Эван, Тигран Петросян, Магнус Карлсен, шахматный турнир, Капабланка, политический деятель, Куба, председатель Олимпийского комитета, умение концентрироваться, профессиональный шахматист, философия, психоанализ, шахматное мышление, тренер.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 25.03.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 08.04.2022թ.: